ՎԱՐԴԱՆ ԱՍՑԱՏՐՅԱՆ

ՄՈԴԵՌՆ ԵՒ ՊՈՍՏՄՈԴԵՌՆ. ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Արդի ժամանակաշրջանի էությունը

XX դարի վերջը նշանավորվեց մոդեռնի ժամանակաշրջանի ավարտով. 70-ականներին փիլիսոփայական-պատմական եւ սոցիոլոգիական գրականության քննարկման առարկա էր այն հարցը, թե ինչպես անվանեն անցնող ժամանակաշրջան եւ այդ վեճին մասնակցողների մեծամասնությունը առավել հարմար համարեց «մոդեռն» կոչել, քանի որ այն ներառում էր արեւմտյան մշակույթի պատմության այդ առավել հագեցած շրջանի էական գծերը: Մոդեռնի ժամանակաշրջանը նախորդող միջնադարյան ժամանակաշրջանից բաժանում է ռացիոնալիզմի գաղափարը՝ համապատասխան անտրոպոցենտրիզմի գաղափարի հետ: Այս երկու գաղափարների միավորումը պայթեցրեց ավանդական միջնադարյան մշակույթի թագավորությունը:

Եթե ավանդական հասարակությունը մերժում էր կյանքի արմատական զարգացումը, կատարելագործումը, դա չէր արտահայտում այդ հասարակության հիմքում ընկած արարչության կրոնական գաղափարը: Ըստ այդմ՝ աշխարհի եւ մարդու արարումը կատարյալ է, անկատար է միայն մարդու վերաբերմունքն առ իր Արարիչը: Աշխարհում առկա անկատարությունները հետեւանք են ոչ թե բնության անկատարության, այլ Արարչի առաջ արժանապատվություն ձեռք բերելու, սեփական կոչումը ճանաչելու եւ ըստ արժանվույն իրագործելու մարդու կամքի ու ջանքի անկատարության: Հետեւապես պետք է կատարելագործել ու զարգացնել մարդու այս հատկանիշները, այլ ոչ թե աշխարհը: Հակառակը, հարկավոր է ջանալ պահպանել ամբողջությամբ այն կարգերն ու կերպերը, որոնք ժառանգվել են նախնիներից: Եկեղեցու կողմից խստորեն հսկվող այս արգելանքը քննադատության ենթարկեցին ուշ Վերածննդի իտալացի հումանիստներ Դանթե Ալիգիերին, Ֆրանչեսկո Պետրարկան, Մարսիլիո Ֆիչինոն, Ջովանի Պիկո դելլա Միրանդոլան:

Նրանք առաջ քաշեցին եւ հիմնավորեցին մարդու ինքնաբավության եւ ինքնին արժեք լինելու գաղափարը, առաջին անգամ բացահայտորեն խոսեցին մարդու արժանապատվության մասին, որը ոտնահարվում է ինչպես նրա համար օտար արտաքին բնության, այնպես էլ մարդու համար անվայել սոցիալական պայմանների կողմից: Ըստ նրանց՝ բարելավման կարիք ունի ոչ թե մարդը, այլ աշխարհը, որում ապրում է մարդը: Դեռեւս Ժան Ժակ Ռուսոյի ժամանակներից արմատավորված է այն թյուր պատկերացումը, թե բավական է ապահովել ազատությունը եւ անհատին օժտել իրավունքներով, եւ նա ինքը անխուսափելիորեն կընտրի բարին ու իր համար օգտակարը: Ուստի եւ ոչ մի արտաքին հեղինակություն չպետք է նրան մատնանշի, թե ինչն է բարի եւ ինչը՝ չար: Մարդն ինքն է որոշում վարքի բարոյական նորմերը: Դա կոչվում է մարդու բարոյական ինքնավարություն:

Հետեւապես, պետք է փոփոխվի աշխարհը եւ համապատասխանեցվի մարդուն, դառնա նրան ենթակա:

Այսպիսով՝ մոդեռնի ժամանակաշրջանը սկիզբ է առնում ավանդական հարաբերությունների ավերմամբ: Կյանքի մոդեռնիզացիայի միջոց է դառնում դրա ռացիոնալացումը, այսինքն՝ կյանքի վերափոխումը բանականության պահանջների համեմատ: Օնթոլոգիական իմաստով մոդեռնիզացիան նշանակում էր մարդկության պատմության մեջ կատարվող արմատական շրջադարձ՝ լիարժեք խզում ավանդությունից, մշակույթի առաջնայնության ճանաչում բնության նկատմամբ, բանականության հաղթանակ:

Արեւմտյան մշակույթի հիմնական մետաֆոր է դարձել ձեւի մետաֆորը: Աշխարհում այլեւս գոյություն չունի որեւէ բան, որը կարողանա խուսափել ձեւավորումից, հակառակվել դրան: Մոդեռնի մարդը բնությունը նույնացնում է վայրագության, դաժանության, անկանխատեսելիության հետ: Այն մշտական սպառնալիք է ներկայացնում մարդու անվտանգության ու բարեկեցության համար եւ այդ իսկ պատճառով պետք է հաղթահարվի, խոնարհեցվի, մշակության ենթարկվի: Ռացիոնալ գիտությունը, տեխնիկան եւ ռացիոնալ կազմակերպված արտադրությունը բնության վարժեցման ու վերահսկողության հիմնական միջոցներն են: Մոդեռնի ժամանակաշրջանին տիպիկ մարդու համար բնութագրական է ագրեսիվ ակտիվությունը, որի շնորհիվ նա կարողացավ պարզունակ նավակներով կտրել օվկիանոսը, նոր երկրներ բացահայտել ու յուրացնել, դատարկ վայրերում քաղաքներ հիմնել ու գործարաններ կառուցել:

Մոդեռնը, քայքայելով ավանդությունը, խարխլեց նաեւ բարոյական նորմերի բացարձակությունը: Բարոյականությունը դուրս մղվեց հանրային կյանքից եւ դադարեց կայունացնող գործոն լինել կյանքում: Այն դարձավ լոկ անհատի մասնավոր գործ: Բարոյականության նկատմամբ նման վերաբերմունքը բացատրվում է հաշվարկման ու կանխատեսման, այսինքն՝ ռացիոնալիզացիայի, չենթարկվող ամեն բանի նկատմամբ մոդեռնի անվստահությամբ ու անգամ ատելությամբ:

Իրականության ռացիոնալացումը նշանակում էր նաեւ դեմիստիֆիկացիա. կենսաբանական ու սոցիալական գոյության վրայից խորհրդավորության վարագույրի հեռացումը՝ դրանք գիտության, տեխնիկայի միջոցով լուսաբանելու եւ ռացիոնալ կազմակերպելու ճանապարհով: Հետեւապես մոդեռնին համահունչ ու համարժեք էին այնպիսի տեսական որոնումները, որոնք իրենց առաջ նպատակ էին դնում ոչ թե վերացական մետաֆիզիկական դատողությունները, այլ այնպիսի գլոբալ նախագծերի որոնումը կամ ստեղծումը, որոնք կօգնեն հաղթահարել էմպիրիկ գոյության **էառսը** եւ ի վերջո հասնել կատարելության: Մարդկանց պետք է ոչ թե Աստված, ոչ թե ճշմարտության, բարու եւ արդարության բացարձակ սահմանումները, այլ հստակ, հասկանալի եւ ամենակարեւորը՝ իրագործելի երաշխիքներ:

Այսպիսով՝ մոդեռնը հենց սկզբից հենվել է այն պարզունակ հավատին, որ կրթության, առողջության, հագուստի եւ այլնի նկատմամբ ռացիոնալ մոտեցման օգնությամբ, ընդհուպ խղճի ռացիոնալ կազմակերպման միջոցով, կարելի է վերակերտել աշխարհը:

Միայն կլիներ, եթե մոդեռնով դիտարկեինք միայն ֆենոմենալ դիտանկյունից եւ

անտեսեինք դրա գաղափարը սնող օնթոլոգիան: Չէ՞ որ աշխարհը բարեկարգելու, անվտանգ ու հարմարավետ դարձնելու մարդկանց ձգտման մեջ ոչ մի վատ բան չկա: Կրոնական ձեւակերպմամբ դա վերածվում է չարչարանքներից ազատվելու եւ փրկության արժանանալու ձգտման: Բոլոր համաշխարհային բարոյական կրոնները հիմնվում են հենց փրկության գաղափարի վրա՝ ստեղծելով անհատի ապրելակերպի, նրա առաքինության ու փրկության խստորեն փոխկապված համակարգեր: Մոդեռնը չհրաժարվեց փրկության գաղափարից, այլ դեսակրալիզացրեց (սրբազնազերծեց)՝ վերափոխելով այն ազատության գաղափարի: Ազատությունը այն բարձրագույն արժեքն է, հանուն որի դարաշրջանի մարդն ապրում եւ գործում է: Նրա համար «ազատագրվելը» միայն մեկ բան է նշանակում. շրջակա միջավայրը դարձնել հասկանալի ու կառավարելի, այդտեղից հեռացնել այն ամենը, ինչը չի ենթարկվում ռացիոնալացման:

Տնտեսության մեջ մոդեռնի ժամանակաշրջանը բնութագրվում է ազատ շուկայական տնտեսության ի հայտ գալով ու զարգացմամբ: Այն հենվում էր այն գաղափարի վրա, որ շուկայի տրամաբանությունը առավել ռացիոնալ է, եւ ուրեմն, ապահովում է առավելագույն արդյունավետություն: Այն հեղափոխական դեր խաղաց արեւմտյան տնտեսության բուռն որակական աճին:

Քաղաքական ոլորտում մոդեռնիզացիան ընթանում էր նոր ժողովրդավարական ինստիտուտների կողմից ֆեոդալական - միապետական կարգերի դուրս մղմամբ: Ազատությունը չի կարող կախված լինել մի մարդու քմահաճությունից. այսպիսին էր մոդեռնի քաղաքական ու իրավական պահանջը:

Որակական փոփոխություններ էին տեղի ունենում նաեւ մոդեռնի ժամանակաշրջանի մարդու ապրելակերպում: Երկար ժամանակ անհատի մասնավոր կյանքին ակտիվորեն միջամտող եւ նրա գոյության հիմնական պարամետրերը սահմանող կրոնը հոչակվեց մարդու լոկ անձնական գործը. կրոնի հանրային մեծածավալ գործունեությունը հանգեցվեց մասնավորի: Այն լիովին համընկնում էր բողոքական քրիստոնեությանը եւ բխում նրա գաղափարներից:

Այսպիսով՝ մոդեռնը կարելի է ընկալել որպես մեկ ֆունդամենտալ արժեք՝ բանականության վրա կյանքը կառուցելու փորձ: Այս փորձի արդյունքները միարժեք չեն: Մի կողմից՝ այդ 500 տարի տեւած կյանքի ռացիոնալացման վրա կառուցվել է արեւմտաեւրոպական քաղաքակրթության հսկա կառույցը, որտեղ երաշխավորված են անհատի առավելագույնս հնարավոր ազատությունները, եւ նրա ֆիզիկական գոյությունը հասել է առավելագույն հարմարավետության: Իսկ մյուս կողմից՝ ռացիոնալացումը հանգեցրեց մշակույթի միասնական իմաստային փիրույթի տրոհմանը միմյանցից առանձնացված բազմաթիվ ինքնուրույն ոլորտների: Այս փաստը անակնկալ էր անգամ մոդեռնիզացիայի տեսաբանների համար: Չէ՞ որ ռացիոլանիզացիան իրականության վերափոխումն է բանականության օրենքներին համապատասխան, որոնք միասնական, համընդհանուր են: Տրամաբանորեն, ի թիվս այլոց, դա նշանակում է աշխարհի ունիֆիկացում, ինչպես տարբեր մշակույթների, այնպես էլ առանձին մշակույթի տարասեռ ոլորտների ավելի սերտ մերձեցում: Իսկապես, ձեւականորեն ռացիոլացումը նշանակում է կյանքի սպանդարտացում: Սակայն գոյություն ունի նաեւ նյութական կամ արժեքային

ռացիոնալացում: Մոդեռնիզացիայի շրջանակում վերափոխելով իրականությունը՝ մարդիկ գործել են ոչ միայն նպատակային ռացիոնալացման գործունեության տրամաբանությամբ, այլեւ արդարության, գեղեցկության, մարդու իրավունքների մասին իրենց պատկերացումների համաձայն: Զեւական ռացիոնալացումը ենթադրում է գործունեության տրամաբանության եւ այն օբյեկտի իմաստային տրամաբանության առավելագույն համապատասխանեցմամբ, որին ուղղված է այդ գործունեությունը: Արդյունքում իրականության առանձին ոլորտներ մշակվում են այդ ներքին իմաստային տրամաբանության ճնշման ներքո՝ ավելի ու ավելի առանձնավորվելով: Այդպիսով՝ տնտեսությունը կատարելագործվում է միայն հանուն տնտեսության, քաղաքականությունը՝ հանուն քաղաքականության, իրավունքը նույնպես դառնում է նորմատիվության ոլորտ՝ անտարբեր է մարդու նկատմամբ: Բոլոր այդ ոլորտներին առաջնորդում է սեփական ներքին արժեքներն առավելագույն հասկանալի եւ իրագործելի դարձնելու ձգտումը: Աշխարհը, մի կողմից դառնում է ավելի պարզ ու թափանցիկ, իսկ մյուս կողմից՝ ավելի է բարդանում՝ իր մասերի դիֆերենցման ու մասնագիտացման պատճառով: Աշխարհի անիմաստությունն ու չարչարանքների անտեղի ու անվաստակ լինելը բացատրելու ձգտումը պահանջում է իրականության սիստեմատիզացիա եւ ապրելակերպի ռացիոնալիզացիա: Սակայն միաժամանակ, արժեքային ռացիոնալացման հետեւանքով աշխարհը դառնում է ավելի ու ավելի պլյուրալ, կորցնում է միասնական իմաստային կենտրոնը:

Արդեն անցյալ դարի կեսերին փիլիսոփաները գիտակցեցին ռացիոնալիստական պարադիգմայի սպառվածությունը իր դասական, հեգելյան տեսքով: Դա, իհարկե, չէր նշանակում, որ մարդկությունը, հասնելով իր զարգացման գագաթնակետին, անցում է կատարում դեպի անկումային փուլը: Քանի որ ամբողջ պատմությունը Հեգելի կողմից ներկայացվում էր, որպես իրականության բանականացում, ռացիոնալացում, ապա վերջինիս ավարտը համընկնում է ինքնագիտակցման գործընթացի ավարտի հետ: Այդպիսով՝ պատմության ավարտը նշանակում է մարդկային էության լիակատար իննքնահիրացման, ազատության առավելագույն հնարավոր մարմնավորման ժամանակաշրջանի սկիզբ: Պատմության ավարտը բնութագրվում է նաեւ նրանով, որ աշխարհը դարձել է լիովին պարզ, հասկանալի եւ մարդու կողմից վերահսկելի:

Պատմության ավարտը ընկալվում է որպես մարդկության զարգացման փուլի ավարտ եւ պարզապես ապրելու շրջափուլի սկիզբ՝ առանց բացահայտումների, հեղափոխությունների, անդրսահմանային իդեալների ձգտման. հանգիստ, կուշտ, հարմարավետ գոյություն:

Մոդեռնի ժամանակաշրջանի վախճանի մասին շատ է գրել նաեւ Ֆ. Նիցշեն: Նրա «Ասված մեռավ» արտահայտությունը հարկ է հասկանալ որպես այն փաստի հաստատում, որ ռացիոնալիզացիայի միջոցով աշխարհի դեմիստիֆիկացիան հանգեցրեց միասնական բարոյական սուբստանցի, որի անձնավորումն Ասված է, լոգոսանը: Մարդը մեն-մենակ մնաց բարու եւ չարի մշտական ընտրություն կատարելուն դատապարտված իր խղճի հետ: Եվրոպական մշակույթին տիրող այդ նիհիլիզմից, ըստ Նիցշեի, կարող է դուրս գալ միայն տիրապետելու կամքով տարված «գերմարդը»:

Անկողմնակալ օրենքներն ու արդյունավետ գործող սոցիալական ինստիտուտներն անկարող գտնվեցին ապահովելու մարդկանց ավանդական հասարակությանը հատուկ ջերմ

ու սերտ կապերը: Եւ ամենակարեւորը 500 տարի տեւած հեղեւողական մոդեռնիզացիայի արդյունքում պարզվեց, որ իրականությունը տրոհվել է բազմաթիվ ինքնուրույն արժեքային աշխարհների, որոնք համառորեն պաշտպանում են սեփական ինքնաբավությունը: Այսպես՝ գերմանական մշակույթը հայտարարում է ֆրանսիականի նկատմամբ իր գերազանցությունը, տնտեսությունն իրեն բարձր է դասում քաղաքականությունից ու կրոնից, գիտությունն իր գործունեության արդյունքներն առավել համարժեք է համարում եւ ատելությամբ է նայում փիլիսոփայությանն ու արվեստին, կաթոլիկությունը հերձված է համարում քրիստոնեության մնացիալ բոլոր ուղղությունները: Բացակայում է զիջելու, համաձայնության գնալու, ընդհանուր ինտեգրող եզրեր գտնելու ձգտումը:

2. Ժամանակակից աշխարհը գլոբալ խնդիրների առջեւ

Մոդեռնի արժեքային համակարգի վերագնահատման հարցադրումը 50-ականներից սկիզբ առած գլոբալ էկոլոգիական խնդիրների լուծման անհրաժեշտության անվան տակ կատարեց Հռոմյական ակումբը՝ 70-80-ականների իր բազմաթիվ մոդելային հաշվարկների արդյունքում: Բնական միջավայրի դեգրադացիայի գլխավոր պատճառ էր համարվում ժամանակակից կապիտալիստական տնտեսության էքսպանսիոնիստական բնույթը. Այն կոչված է աշխարհի արագ աճող բնակչությանն ապահովել ամենատարբեր բարիքներով եւ հարկադրված է մշտապես ավելացնել իր հզորությունը, որը կատարվում է բնության աղտոտման ու բնական ռեսուրսների սպառման հաշվին: Առաջարկներից մեկը կոչվեց «կայուն զարգացման հայեցակարգ», ըստ որի առաջարկվում է տնտեսությունն այնպես զարգացնել, որ ռեսուրսների սպառումն ու աղտոտման մակարդակը չանցնեն սահմանված կրիտիկական ծավալը եւ կրճատվի բնակչության թիվը: Մեդուզի մոդելային հաշվարկները ցույց տվեցին, որ դա հնարավորություն կտա լավագույն դեպքում 50 տարով հետաձգել ակնկալվող աղետը: Առաջարկը բարձրացվեց 1992թ. Ռիո դե Ժանեյրոյում Մակ-ի Գլխավոր ասամբլեայի անցկացրած հատուկ սեսիայում, որը պետք է մշակեր XXI դարում մարդկության զարգացման ռազմավարությունը: Սակայն այստեղ համաձայնություն չեղավ ոչ գլոբալ ճգնաժամի պատճառների եւ ո/չ էլ դրանից դուրս գալու առաջարկված եղանակների շուրջ: Դրանից հինգ տարի անց Նյու Յորքում միեւնույն օրակարգով անցկացվեց երկրորդ սեսիան, որի ժամանակ ներկայացվեց «շրջակա միջավայրի վիճակի մասին գլոբալ պատկերը»: Արդյունքում ընդունվեց «պետությունների ու կառավարությունների ղեկավարների հայտարարությունը»՝ կոնկրետ առաջարկություններով հանդերձ: Դրանում կոչ էր արվում նաեւ առանց հապաղելու ջանք դնել փոխելու համար դեգրադացիայի միտումը: Սակայն ողջ այս գործունեությունը բավարար արդյունքներ չի տալիս, քանի որ այն իրագործվում է մոդեռնի գաղափարների շրջանակում, քանի որ չի կատարվել գլոբալ ճգնաժամի պատճառների լուրջ վերլուծություն: Փոխարենը Հռոմյական ակումբի հիմնադիր Ա. Պեչչեին որպես գլոբալ փոփոխությունների երաշխիք է դիտարկում դեպի ապագա գլոբալ համաշխարհային կարգը կողմնորոշված «նոր մարդկային հատկանիշների» մշակման ու զարգացման հարցը:

Այսպիսով՝ առաջարկվում է թողնել աշխարհի վերափոխման գաղափարը, վերադառնալ հոգեւոր ավանդական ակունքում դրված մարդու կատարելագործման ու վերափոխման

գաղափարին: Սակայն սա նախատեսվում է անել ոչ թե գոջալով նախկինում արվածը եւ խոստովանելով մեղքը կամ ավանդական հոգեւոր ընկալումը ճշգրտորեն կատարելով, այլ ակունքից ի վեր նորովի խեղաթյուրելով գաղափարը:

Այսինքն՝ բարոյական ու փիլիսոփայական գնահատման չի ենթարկվում մարդու սոցիալական զարգացման ու ապագայի մասին այն հայեցակարգը՝ «մոդեռնի նախագիծը», որի իրագործումը բերել է այս գլոբալ խնդիրներին:

Ավանդական միջնադարյան հասարակությանը քայքայված հայեցակարգի հիմքում ընկած են մի քանի պարզ, բայց գրավիչ գաղափարներ:

Առաջինը անտրոպոցենտրիզմն է, որը նշանակում է, որ ճանաչողական ու գործնական ակտիվության կենտրոնում մարդն է գտնվում. Մարդն է գոյության գլխավոր կերպարը, դրա կենտրոնը, իսկ մնացյալ ամեն ինչը միայն մարդկային գոյությունն ապահովող միջոցներ են: Այն փոխարինեց ավելի քան հազար տարի տիրապետած թեոցենտրիզմի գաղափարին:

Երկրորդ՝ զարգացումը ենթադրում է աշխարհի անկատարություն, որը եւ պետք է զարգացման ընթացքում շտկվի: Այդ անկատարությունը դրսեւորվում է նրանում, որ մարդը, լինելով կատարյալ էակ, օժտված արժանապատվությամբ, հարկադրված է խղճուկ գոյություն պահպանել:

Երրորդ՝ զարգացման այս մոդելում առաջադրվում են նաեւ զարգացման միջոցները: Դա իրականության ռացիոնալացումն է՝ հաշվարկի, ռացիոնալ կազմակերպման, գիտության ու տեխնիկայի ակտիվ օգտագործման միջոցով այն հաղթահարելով: Կյանքը մարդուն արժանի դարձնելու համար այն պետք է վերափոխել, հարմարեցնել մարդուն:

Չորրորդ՝ զարգացման այդ մոդելը նախատեսում է մարդկային գոյության հանրային ու մասնավոր ոլորտների խիստ բաժանում, չմիջամտում անհատի ներքին հոգեւոր աշխարհին: Վերափոխման, զարգացման ենթակա է միայն արտաքին իրականությունը՝ բնությունն ու հասարակությունը: Ներքին կատարելությունը հայտարարվում է անհատի մասնավոր գործը: Դրանով իսկ հենց սկզբից բացառվում է բարոյական զարգացումը:

Հինգերորդ՝ զարգացումը հայտարարվում էր աշխարհի մասշտաբով ընթացող ունիվերսալ գործընթաց: Գոյություն չունեն երկրներ ու ժողովուրդներ, որոնք կարողանան փեւականորեն հակադրվել արմատական վերափոխումների անխուսափելիությանը: Վաղ թե ուշ նրանք կգիտակցեն, որ տնտեսական, քաղաքական, սոցիալական փակուղուց դուրս գալու միակ ելքը զարգացման արեւմտյան մոդելի ընդունումն է: Այդպիսով՝ զարգացման գաղափարը արեւմտյան մշակույթի համար դարձավ մի ինքնատիպ կրոն: Հենց այդ գաղափարը խթանեց այն հեղափոխական փոփոխությունները, որոնք տեղի ունեցան Արեւմտյան Եւրոպայի եւ Հյուսիսային Ամերիկայի երկրներում մոդեռնիզացիայի սկզբից ի վեր ընկած ժամանակահատվածում: Իհարկե, ակնհայտ է այդ տարածքում մարդկանց կյանքի որակը բարելավվեց, որն էլ արեւմտյան փորձառությամբ հրապուրվելու պատճառ դարձավ: Թվում էր, թե բավական է պայմաններ ստեղծել մարդկանց ու ապրանքների ազատ մրցակցության համար, ապահովել քաղաքական ազատություններն ու ապրելակերպի ազատությունը, սահմանել իրավական պետության ռեժիմ, եւ մի քանի տասնամյակից հետո կսկսվի առատության հասարակության պտուղները հավաքելու ժամանակը: Սակայն հենց զարգացման արեւմտյան մոդելի ունիվերսալացումն էլ ահազանգ եղավ մտավորականների

համար, որոնք դրանում տեսան գլոբալ աղեղի վտանգավորությունը: Չնայած արտաքին գրավչությանը՝ այդ մոդելը խիստ ծախսատար է: Այն հիմնվում է բնական ռեսուրսների ակտիվ շահագործման վրա, քանի որ ապրանքներ ու ծառայություններ ստեղծող, այլոց գրավող արեւմտյան մարդու հարմարավետ կյանքն ապահովող ժամանակակից արդյունաբերական արտադրության համար հիմք են հանդիսանում Երկրի էներգետիկ եւ հանքային սահմանափակ ռեսուրսները: Ավելին, զարգացման արեւմտյան մոդելն արագընթաց ունեցավ, քանի որ այդ երկրների տնօրինության տակ էին գտնվում գրեթե ողջ աշխարհի մարդկային ու բնական ռեսուրսները: Միայն XX դարում տեղի ունեցած փոփոխությունները սահմանափակեցին այդ իրավիճակը: Այս առումով դեստրուկտիվ է հենց զարգացման մոդելը, որն ընդունվեց 500 տարի առաջ եւ իրեն միանգամայն սպառեց այսօրվա դրությամբ: Սկսած 70-ականներից զարագացումը դադարեց միանշանակորեն նույնացվել արեւմտականացման հետ եւ աշխարհը դադարեց միասնական լինելուց՝ միասնական ինտեգրող աշխարհայացքային գաղափարի իմաստով:

3. Ժամանակակից հասարակությունը պոստմոդեռնի իրավիճակում

Վերն ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ համաշխարհային հասարակությունը ներկայումս անցումային վիճակ է ապրում: Մի կողմից՝ այն արդեն կորցրել է մոդեռնի հատկանշական գծերը, իսկ մյուս կողմից՝ դրանում դեռեւս չեն երեւում այն ուրվագծերը, որոնք հնարավորություն կտան նույնականացնել դրա նոր որակական բնութագիրը: Անհստակությունը, լղոզվածությունը, անորոշությունը անցումային վիճակի ակնառու նշաններն են: Այն անցած փուլի իմաստավորման, արդյունքների ամփոփման, մոդեռնի հիմնական արժեքների՝ նախեւառաջ ռացիոնալության վերագնահատման շրջան է: Մոդեռնի ճգնաժամն առաջին հերթին կապվում է բանականության ինքնավարկաբեկման հետ: Մոդեռնի աշխարհը կազմված է անհայտ մեծություններից, որոնց մասին իմանալը պարտադիր չէ: Կատարիր քո գործը եւ մի մտածիր ոչ մի բանի մասին: Սակայն, ինչպես ցույց են տալիս պոստմոդեռնի տեսաբանները, գոյության հարամարավետությունը նվազագույն դատողությունների պայմաններում մի աշխարհում, որը կազմված է անհայտներից ու չլուծված խնդիրներից, շատ դժվար գործ է: Չնայած գիտության ու տեխնիկայի օգնությամբ ստեղծված արտաքին հարմարություններին, աշխարհը, պարզվում է, հարմարեցված չէ հասարակ մարդկային զգացմունքներին: Մոդեռնի նախագիծն ըստ էության տոտալիտար էր: Դրա հիմքում ընկած էր գլոբալ համաշխարհային կարգ ստեղծելու ձգտումը, որում տեղ չուներ քաոսը, սպոնտանությունը, իռացիոնալությունը: Այն մտքի պատմության մեջ երբեւէ նախագծված ուտոպիաներից մեծագույնն էր: Պատմությունը ցույց տվեց, որ մարդկային իրականությունը սկզբունքորեն չի կարող «որսվել» ռացիոնալ դիսկուրսում:

Վերջապես, պոստմոդեռնի քննադատների կարծիքով, մոդեռնի սպառվածությունը դրսեւորվել է նաեւ մի էական հանգամանքում. այն դադարեց ապահովել համերաշխության արդարության այն նվազագույն չափը, որն անհրաժեշտ է համակեցության նորմալ գործունեության համար: Համերաշխությունը, որը գնահատում է մարդկանց մերձավորության աստիճանը, ընկալվում որպես «մենք» - ի զգացողություն, կարող է ապահովվել արտաքին, հաճախ հարկադիր միջոցներով, կամ բխել ազգակցական

կապերից, հիմնվել մարդկան հոգեւոր՝ մերձավորության վրա: Սրանցից երկրորդը առավել ամուր է, սակայն այն հատկանշական է ոչ մեծ սոցիալական խմբերին: Այն շատ կարեւոր սոցիոլոգիական գործոն է, որը վկայում է հիմնական սոցիալական ձեւերի՝ պետության եւ քաղաքացիական հասարակության միասեռ բնույթի մասին: Համերաշխության այդ կապի թուլացումը հասարակությունը անպաշտպան է դարձնում տնտեսական ու քաղաքական ճգնաժամերի ժամանակ, ոտրոֆիայի է ենթարկում արտաքին ագրեսիայի նկատմամբ դիմադրողականության կամքն ու կարողությունը: Համերաշխության ճգնաժամը նշանակում է հիմնական սոցիալական խմբերի միջեւ երկպառակության սկզբնավորում եւ ընդհանուր նշանակության արժեքների միասնական համակարգի դեվալվացիա: Մոդեռնի պայմաններում համերաշխությունը հիմնվում էր տնտեսական գործունեության ընդհանուր կարգերին, ընդհանուր քաղաքական նպատակներին, ապրելակերպի միասնական միասնական ստանդարտներին: Դա հնարավոր էր, քանի որ մոդեռնի հասարակությունը առավել կամ պակաս չափով հոմոգեն էր, եւ հետեւապես, սոցիալական կարգերը, նորմերը եւ հոգեւոր արժեքները պարզ էին ու հասկանալի բոլորի համար:

Համերաշխությունը սերտորեն կապված է նաեւ սոցիալական կենցաղի մեկ այլ կարեւոր պայմանի՝ արդարության հետ: Եթե առաջինը սոցիոլոգիական ֆենոմեն է, ապա երկրորդն ունի նորմատիվային բնույթ եւ պատկանում է պրակտիկ բանականության կոմպետենցիային: Դա նշանակում է, որ այն առավել զգայուն է տարբերությունների նկատմամբ, ավելի քիչ է ենթարկվում ունիվերսալացման: Հասարակության մեջ արդարության նվազագույն չափը երաշխավորվում է իրավունքով: Սակայն իրավունքը հիմնվում է արդարության «միջինացված» նորմի վրա, հետեւապես որքան որ տարասեռ է հասարակությունը, այնքան նրանում ավելի շատ է զգացվում արդարության պակասը: Համերաշխությունն ու արդարությունը սերտորեն կապված են միմյանց: Հետեւաբար, հասարակության պլյուրիզացիայի արդյունքում վրա հասած համերաշխության ճգնաժամը ենթադրում է նաեւ արդարության ճգնաժամ:

Մոդեռնի քննադատությունը պոստմոդեռնի ռազմավարության միայն մեկ՝ բացասական մասն է: Երկրորդ, դրական մասը փորձ է ներկայացնելու հասարակության ու մարդկության մասին սեփական պատկերացումը այն իրավիճակում, երբ մոդեռնը, իսկ դրա հետ մեկտեղ նաեւ պատմությունը, ավարտվում է:

Արդի հասարակության գլխավոր տարբերակիչ գիծը մշակութային պլյուրալիզմն է: Այդ մշակութային պլյուրալիզմը պարադոքսալ հետեւանքն է ռացիոնալացման ճանապարհով իրականության սրբազնազերծման 500 տարի տեւած գործընթացի: Այդ գործընթացն ի վերջո հանգեցրեց հետերոգեն պլյուրալիստական աշխարհի: Իհարկե, աշխարհը երբեք հոմոգեն ու միասեռ չի եղել. Դրանում մշտապես ներկա է լինում բազմաձեւությունն ու տարաձեւությունը, սակայն միջնորդությունների մեծ կամ փոքր շղթայի միջոցով մշտապես հանգում է մի ինչ-որ իմաստային միասնության: Մշակութային շրջանակում այդ միասնությունն ապահովվում է աշխարհայացքով՝ լինի դա առասպելական, կրոնական թե գիտական:

Սոցիալական ոլորտում պոստմոդեռնը նշանակում է ցանկացած ընդհանրացնող կառույցի հեղինակության մերժում՝ սկսած պետականից մինչեւ կորպորատիվը, մեծ գաղափարներից ու էթիկական համակարգերից մինչեւ սեղանի շուրջ անհրաժեշտ

վարքականոնը: Ակնառու է հասարակական կյանքի ապակենտրոնացումը, ավանդական ինտեգրացնող ինստանցիաների՝ պետության, եկեղեցու ատրոֆիան:

Այդ ինստանցիաների նկատմամբ վստահությունից հրաժարվելը բացատրվում է նրանով, որ դրանց կայունացնող դերը հենվում էր բացահայտ կամ թաքնված բռնությանը (իրավական, հոգեւոր, տնտեսական): Բազմամշակութային հասարակությունը չի ընդունում բռնությունը՝ այն համարելով տարբերությունները, ոչ ստանդարտը, յուրահատուկը ճնշող գործիք: Այդ հասարակության գլխավոր արժեքը արդարությունն է: Պլյուրալ աշխարհի պայմաններում արդարությունը կայանում է ոչ թե արդարության «միջինացված նորմի» ապահովմամբ, այլ բոլորի շահերի ապահովմամբ՝ չանտեսելով եւ ոչ մեկին: Չհարկադրել բոլորին հավասարության մի ինչ-որ մետաինստանցիայի (օրինակ՝ օրենքի) առջեւ, այլ բոլորին հնարավորություն տալ լինելու ինքզինքը: Այսպիսով, պոստմոդեռնի հասարակությունը բոլորի համար պարտադիր օրենքի բացակայության պայմաններում հավասարի ձգտումների հասարակություն է: Պոստմոդեռնի համար անարդարությունը բազմակողմ է. Անգամ աշխարհի մասին մի որոշակի պատկերացումը, գիտական պարադիգման, ապրելակերպի մի որեւէ ձեւի, մոդայի պարտադրումը անարդարություն կերտող բռնություն է: Որպես տիրապետող ընդունելով մի որեւէ բան, այդպիսով դուրս է մղվում բոլոր մնացյալ նախագծերը: Այսպես, մարդու մասին խոսում են եւ անթրոպոլոգիան, եւ ֆիզիոլոգիան, սոցիոլոգիան, իրավաբանությունը, փիլիսոփայությունը, սակայն նրանցից եւ ոչ մեկը չպետք է փորձի մոնոպոլիզացնել մարդու մասին ճշմարտություն ասելու իրավունքը, քանի որ դա անարդար է մյուսների հանդեպ: Նույնը կարելի է ասել տնտեսվարման մի որոշակի մոդելի գերակայության կամ քաղաքական կառույցի «միակ ճիշտ» տեսակի մասին: Արդարությունն ուշադիր է բոլորի նկատմամբ: Որեւէ ասպարեզում ընդհանուր հայտարարի բերելը, որքան էլ որ այն փաստարկված որոշում լինի, անարդար է:

Ի տարբերություն մոդեռնի պոստմոդեռնը ցանկանում է միավորել համերաշխությունն ու արդարությունը, որն այլ բան չէ, քան հասարակական կիանքի էության բացատրության մեջ նորմատիվ ու տեսական մոտեցումների միավորման փորձ: Նման փորձերը, Կանտի ժամանակներից սկսած (պրակտիկ ու տեսական բանականության դուալիզմ) ձեռնարկված նման փորձերը դատապարտվել են: Չախողվեցին նաեւ պոստմոդեռնի տեսաբանների համանման փորձերը եւ նրանք ստիպված եղան համերաշխությունը զոհաբերել հանուն արդարության: Լիոտարի, Տորտիի, Դերիդի, Վելշի եւ պոստմոդեռնի այլ առաջատար տեսաբանների ներկայացրած արդի հասարակության մոդելը կարելի է բնութագրել որպես «քաո-տիեզերք»: Դա մի հասարակություն է, որ որտեղ բացակայում է իմաստային ու իշխանական միասնական կենտրոնը: Աշխարհի օնթոլոգիա է հայտարարվել քաոսը, որի կազմակերպմանն է կոչված մարդը՝ այդ քաոս ներմուծելով իր սեփական սկիզբը, ձեւավորելով իր սեփական տիեզերքը:

Իրականությունը վերածվում է խաղահրապարակի, թատրոնի, որտեղ ռեժիսորները, որոնց դերում հանդես են գալիս կրոնական մարգարեները, ազգային առաջնորդները, կուսակցական ղեկավարները, իսկ երբեմն նաեւ խենթացած մեսիաները, բեմադրում են իրենց թատրոնը, որոնցում իրական չարչարանք են կրում իրական մարդիկ: Մարդու համար այն վերածվում է սեփական ինքնության կորստի, առանց ակունքների, առանց հոգեկան ու ապրելակերպային առումով մերձավոր մարդկանց գոյության մի ողբերգության:

Ժամանակակից հասարակությունում առկա են աշխարհի առաջ այդ վախի նկատմամբ ռեակցիայի տարբեր տեսակներ, որոնցից ամենատարածվածը էթնիկականն է: Հենց էթնիկ խումբն է թշնամական ու անտարբեր աշխարհից փախչող մարդկանց ապահովում ապաստանով: Այստեղ դյուրին է լավն ու վատը, թույլատրելին ու անթույլատրելին, արդարն ու անարդարը տարբերակելը, թեեւ այդ տարբերակումները գործում են միայն տվյալ իմաստային խմբի ներսում:

«Մենք - նրանք» տարբերակումը, որը հատկանշական է Հին աշխարհին, վերածնվում է «նեոտրայբալիզմի» (tribalism - ցեղային) տեսքով՝ որպես էթնիկ սեպարատիզմ, որը բազմազգ պետություններում վերածվում է միջէթնիկ արյունոտ ընդհարումների:

Ժամանակակից հանրահայտ քաղաքագետ եւ ֆուտուրոլոգ Սամվել Հանթինգթոնը հաստատում է, որ արդի աշխարհում քաղաքականության տիրապետող տեսակ է դառնում էթնիկական քաղաքականությունը, եւ հենց դա է հանդիսանում ընդհարումների ու հակամարտությունների հիմնական պատճառ: Սակայն առողջ դատողությունը հուշում է, որ պատերազմի ու խաղաղության սահմանի վրա հավասարակշռության պահպանումը, ինչի մասին խոսում են «քառ-տիեզերքի» տեսության կողմնակիցները, չի կարող նորմալ վիճակ համարվել: Արդի աշխարհն այսօր, ավելի քան երբեւե, կարիք ունի միասնականության, եւ այդ իսկ պատճառով չեն դադարում դրան հասնելու տեսական ու պրակտիկ փորձերը:

4. Հասարակական համերաշխության կազմակերպման նոր ձեւերի որոնումները

Նման փորձերից մեկն է քաղաքական պրակտիկայում սոցիալ-փիլիսոփայական տեսության ու կոմունիստական շարժման մեջ կոմունիտարիզմի գաղափարի վերածնունդը: Ինչպես որ պոստմոդեռնն է մոդեռնի փիլիսոփայական ու քաղաքական նախագծի տոտալիտար բնույթը, այնպես էլ կոմունիտարիզմն է սկսում մոդեռնի միջուկի՝ լիբերալ ժողովրդավարության տեսության, քաղաքական-իրավական քննադատությունը:

Դասական լիբերալիզմը, որի հիմնական գաղափարները դրվել են դեռեւս Ջոն Լոքի կողմից, պաշտպանում է մարդու կենսագործունեության հանրային ու մասնավոր ոլորտների հստակ տարանջատումը եւ բարոյական ընտրությունը համարում է բացարձակապես անհատի մասնավոր գործը: Լիբերալիզմը հասարակությունը գնահատելու միակ նորմատիվ մասշտաբ է համարում հավասար իրավունքների, ազատությունների եւ հնարավորությունների համընդհանուր սկզբունքը: Այդպիսով՝ այն ի սկզբանե խթանում է անհատական ազատությունը, նախաձեռնությունն ու պատասխանատվությունը: Համարելով, որ սոցիալական կյանքը չի կարող ընթանալ առանց մրցակցության ու հակամարտության, լիբերալիզմը պետության դերը հանգեցնում է ոչ թե այդ ընդհարումները կանխելուն, վերացնելուն, այլ դրանց ընթացքի արդար (կարդա՝ հավասար) պայմաններն ապահովելուն:

Կոմունիտարիստները համարում են, որ լիբերալիզմի կողմից խթանվող արժեքները չափազանց աբստրակտ բնույթ են կրում եւ չեն կարող մարդկանց կողմից ընկալվել որպես իրենց համակեցության արժեքներ: Լիբերալիզմն իր վրայից հանում է կոնկրետ իրավունքների ու ազատությունների իրացման պատասխանատվությունը՝ այն դնելով անհատի ուսերին: Ըստ էության, լիբերալիզմին հուզում է ոչ թե արդարությունը, այլ

անհատի այս կամ այն ձգտումների օրինականությունը: Բազմամշակութային աշխարհի պայմաններում լիբերալ-ժողովրդավարական մոդելը կորցնում է իր գրավչությունը: Չէ՞ որ նման փարասեռ աշխարհի յուրաքանչյուր ենթահամակարգում գործում են սեփական արժեքային ստանդարտները եւ հետեւապես արդարությունը միանգամայն կոնկրետ ու մատչելի է դառնում: Արդիականությունը պահանջում է հասարակական կյանքի կազմակերպման սովորական ձեւերի, առաջին հերթին պետության ու քաղաքացիական հասարակության, վերագնահատում: Վերջիններս իրենց չափերի պատճառով կորցնում են իրենց արդյունավետությունը, դրանցում կորչում է «մենք»-ի զգացողությունը: «Մեծ հասարակության» մեջ մարդկանց միջեւ հարաբերություններն այն աստիճան միջնորդավորված են, որ կորցնում են իրենց իմաստն ու գրավչությունը: Հասարակությունը դիմակայում է անհատին որպես մի «անթափանց» կառույց եւ նա չի կարողանում իրեն նույնացնել դրա հետ:

Կոմունիտարիզմն առաջարկում է փոխել լիբերալիզմի ունիվերսալիստական կողմնորոշումը: Յուրաքանչյուր «մեծ» հասարակություն կազմված է բազմաթիվ սոցիալական ենթահամակարգերից, որոնք օժտված են տարբեր աստիճանի ինքնուրույնությամբ. դրանք են ընտանիքը, էթնիկ խումբը, կրոնական դավանանքը, մասնագիտական ընկերությունը, սպորտային ընկերությունը եւ այլն: Հենց դրանցում մարդը կարող է գտնել այն, ինչը նրան չի տալիս «մեծ» հասարակությունը (ավանդական տարբերակում դա նախ եւ առաջ համայնքի եկեղեցական ծուխն է)՝ հասկացվելը, համաձայնվելը, ունեցած վստահի ճանաչումը, շահերի ընդհանրությունը, պաշտպանությունը: Ոչ մեծ համակեցությունները համերաշխ են, եւ այդ համերաշխությունը արտաքինից չի հարկադրվում, քանի որ անհատը կամովի է ընտրում իր հաղորդակցության ձեւը եւ կարող է ցանկացած ժամանակ դուրս գալ այդտեղից: Արդարությունն այստեղ ունի ոչ թե անանուն, այլ միանգամայն որոշակի ու հասանելի բնույթ: Կոմունիտարիզմի տեսաբանները պնդում են, որ համերաշխ հասարակությունը մշտապես արդար հասարակություն է:

Փոքր միասնություններում ղեկավարությունն ավելի հասանելի է, տեղեկատվությունն առավել բաց է ու մատչելի, ավելի լայն է ինքնավարության մեջ մարդկանց մասնակցությունը: Մարդու մոտիկությունը մարդուն, փոխադարձ ճանաչողությունը, միմյանց հանդեպ ուղղակի հարգանքը եւ ընդհանրապես հասարակության անդամների ուղղակիորեն որպես կենդանի մարդկանց զգալը, մարդկային ջերմության առկայությունը ճշմարտապես կայուն եւ ամուր միասնության երաշխիք է:

Այսպիսով՝ համերաշխությունը հանդես է գալիս որպես բարոյական միասնության հիմք: Այն ինքնատիպ կապիտալիզատոր է: Առանց համերաշխության, ընդ ուրում հոգեւոր, այլ ոչ թե մեխանիկական, հասարակության իսկական միասնություն չի կարող լինել: Համերաշխ փոքր հասարակությունը իրավունքի կարիք չունի, քանի որ այն իր հիմքում բարոյական է:

Չնայած որ շատ գրավիչ է թվում հասարակական կառույցի կոմունիտար մոդելը, «մեծ» հասարակության գոյության անհրաժեշտությունը՝ նախ եւ առաջ պետության տեսքով, կասկածի առարկա չէ: Պետությունը հանդես է գալիս որպես քաղաքական միավորման հիմնական ձեւ, որպես արտաքին ագրեսիայի եւ ներքին երկպառակության անվտանգության երաշխավոր: Բայց կապված այն բանի հետ, որ անհատի կյանքի մեծ մասն ընթանում է

կամ մասնավոր ոլորտում կամ «կոմունիտար» կառույցներում, պետության արժեքն ու գրավչությունը, նրա անհրաժեշտությունն ըստ արժանվույն չի գնահատվում: Օրենքներն ու նորմերը, առանց որոնց պետությունը չի կարող հաջողությամբ գործել, անհատի կողմից չեն ընկալվում որպես անհրաժեշտություն: Լավագույն դեպքում նա անտարբեր է դրանց նկատմամբ, իսկ ավելի հաճախ բացահայտ կամ թաքուն սաբոտաժի է ենթարկում դրանց ապահովումը: Այսպիսով՝ արդի հասարակության պայմաններում խոսքը գնում է անհատական, հասարակական եւ կորպորատիվ սկզբունքների համատեղման մասին: Որպես նման համատեղման մի եղանակ՝ առաջարկվում է անհատի ազատության նորմավորման գործում պետության եւ նրա կազմի մեջ մտնող միավորումների լիազորությունների վերաբաշխումը: Հասարակական կյանքի հիմնական կառույցները, որոնք օժտված են իրենց անդամների վարքը վերահսկելու հնարավորություններով, օժտվում են «կիսաինքնավար սոցիալական ոլորտի» կարգավիճակով եւ նրանց վերագրվում են այսպիսի հատկանիշներ.

Նրանք հանդիսանում են սոցիալական կարգի հիմնական ստորաբաժանումներ:

Այլ սոցիալական կառույցներից տարբերվում են նրանով, որ նրանք օժտված են ներքին նորմատիվ կարգով, կարգավորում են իրենց անդամների փոխհարաբերություններն ու գործունեությունը,

Նրանցից յուրաքանչյուրը դիմադրում է արտաքին նորմերի ներթափանցմանը եւ ձգտում է առավելագույն ինքնավարության: Այդ ինքնավարության սահմանները որոշվում են նրա ներքին կազմակերպվածությամբ եւ նրա հետ մրցակցող ոլորտի ակտիվությամբ,

Հաճախ «կիսաինքնավար սոցիալական ոլորտի» անդամները իրենց խնդիրները լուծում են առանց արտաքին նորմերին դիմելու: Բայց նույնիսկ դրանց դիմելու դեպքում այն գտնվում է «կիսաինքնավար սոցիալական ոլորտի» վերահսկողության ներքո:

Այդպիսով՝ պետությունն իր վրա է վերցնում միայն ամենաընդհանուր եւ կենսականորեն կարեւոր պարտավորությունները եւ չի զբաղվում անհատների վարքի մանր խնդիրներով: Այս պրակտիկան իրագործվել է նաեւ նախկինում:

Հյուսիսային Կովկասին տիրանալով Ռուսաստանը ստիպված էր հաշվի առնել, որ այնտեղ գործել են երկու իրավական համակարգեր՝ ադաթները (իրավաբանական սովորույթներ) եւ շարիաթը (մահմեդական դատավարություն):

Համանման նախադեպեր առկա են նաեւ այլ երկրներում: Ճապոնիայում դատական մարմինների գիտությամբ թույլատրվում է արյան վրեժը: Շվեցարիայում քաղաքացիական օրենսգիրքը ճանաչում է ընտանեկան իշխանության ինստիտուտը, եւ ըստ այդմ տան տերը իրավունք ունի սահմանել իր ներքին կարգուկանոն: ԱՄՆ-ում մորմոններին թույլատրվում է բազմակնությունը, իսկ Ֆրանսիայում արաբ-մահմեդական էմիգրանտները պսակվում եւ ամուսնալուծվում են շարիաթի օրենքների համաձայն:

Այսպիսով, պոստմոդեռնի ժամանակաշրջանում ձեւավորվում են հասարակական համակարգի նոր կառուցվածքի ուրվագծերը, որտեղ անհատի եւ պետության հարաբերությունները միջնորդավորված են կոմունիտարտիպի ոչ մեծ համակեցություններով: Վերջիններս իրենց վրա են վերցնում «մեծ» հասարակության եւ պետության առջեւ իրենց անդամների շահերը ներկայացնելու պարտավորությունը: Պետությունը, որպես

գլխավոր օրինականացնող իրավական ինստանցիա, բանակցություններ է վարում այդ համակեցությունների ղեկավար կառույցների հետ՝ նրանց տալով ներքին խնդիրները լուծելու առավելագույն լիզորություններ:

Կոմունիստար մոդելի շրջանակում առաջարկվող ելքերն, այնուամենայնիվ, բավարար չեն համարվում գլոբալ խնդիրների (այդ թվում նաեւ՝ էկոլոգիական) լուծման համար: Այստեղ կարիք է զգացվում մշակելու մի միասնական աշխարհճանաչողություն, մոդեռնին փոխարինող զարգացման միասնական ռազմավարություն, որը կկանխի տարբեր մշակույթների ընդհարումը:

Այդ նոր աշխարհճանաչողության կարեւորագույն բաղկացուցիչ մասը պետք է լինի հոգեւորի ու բարոյականի գերակայությունը, որը էապես կփոխի մարդկանց եւ մարդկության ու բնության միջեւ փոխհարաբերությունների որակը: Այն պետք է ձեւավորի արժեքների մի նոր համակարգ: